

# Հաղթանակը ժողովուրդն է կռելու

**Շ**ահումյանի ողբերգության համար բոլորն են պատասխանատու՝ և՛ իշխանությունները, և՛ քաղաքական կուսակցությունները, և՛ Շահումյանի ղեկավարությունը: Եվ դա, իմ խորին համոզմամբ, պատճառական կապի մեջ է մեր ցեղի բնույթի հետ: Հայ ազգային-ազատագրական շարժումների ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ ռազմական փալան հաջողություններից հետո կրում ենք զարմանալի քաղաքական պարտություններ, կորցնում տարածքներ: Եվ տասնյակ տարիներ հետո են պարզվում այդ անհաջողությունների օրյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Ահա թե ինչու խորապես համոզված եմ՝ այսօր չեն գտնելու Շահումյանի ողբերգության պատասխանատուներին, ինչպես որ ցայսօր չեն պարզել մայիսի 27-ին Երևանի երկաթուղային կայարանի, Գետաշենի, Հաղթոթի շրջանի, Բերդաձորի ենթաշրջանի ողբերգությունների մեղավորներին:

Արդյոք զարմանալի՞ չէ, որ չորսամյա ազգային-ազատագրական պատերազմ մղող մի ազգ այդ ընթացքում չի պատժել իր պարտականությունները չկատարած կամ թերացող մեկին: Ասածիս պերճախոս ապացույցներից են օրերս ՀՀ ԳԽ-ի նստաշրջանի՝ Արցախի հիմնախնդրին նվիրված նիստերը: Որևէ մեկը պատժվե՞ց, որևէ մեկը խղճի խա՞յթ զգաց մարդկային ու տարածքային մեր կորուստների համար: Քաղ լիցի: Փոխարենը մեղադրում էին իրար: Ավելին, թե՛ պետական կառուցվածքները և թե՛ ընդդիմությունը կարծես գիտակցորեն ստեղծում էին կոլեկտիվ անվտանգության մի այնպիսի համակարգ, որը թույլ չտար ջրի երես հանելու ամբողջ ճշմարտությունը:

Շահումյանը մեր առջև ծառայած գլոբալ հիմնախնդիրների շղթայի օղակներից մեկն է միայն: Եվ այդ օղակը, շրջանի բնակչության տեղահանումով հանդերձ, չկտրվեց: Պատերազմ է գնում, և այն, ինչ տեղի ունեցավ Մոսկվի լեռնաշղթայից այն կողմ, ռազմաքաղաքական անհաջողություն էր: Պայքարը շարունակվում է: Կորսված Շահումյանը պիտի ետ գրավվի, ինչպես որ այս օրերին, զոհերի գնով, մեկ-մեկ ետ ենք գրավում Մարտակերտի և Ասկերանի գյուղերը:

Մենք երկու ճանապարհ ունենք՝ կամ մինչև հաղթական ավարտ շարունակել ազգային-ազատագրական պայքարը, կամ ձևկաշոք հաշտություն խնդրել թշնամուց: Երրորդ ճանապարհ չեմ տեսնում, չկա: Հայ ժողովրդի արցախյան հատվածը, մեր բովանդակ ազգը պայքարի կողմնակից են, պառլամենտական ընդդիմությունը՝ նույնպես: Հանրապետության նախագահը, որ, իր ասելով, հաշվարկել է մեր կարողությունները, համաշխարհային և ռեգիոնալ բոլոր քաղաքական հարաբերությունները, գտնում է, որ պատերազմի մեջ մտնելը արկածախնդրություն է և այդ դեպքում կկորցնենք մեր հայրենիքի կեսը: Ու ոչ մեկը նախագահին և ընդդիմությանը չի ասում, որ այդ հաշվարկը պարտավոր էին կատարել դեռևս 1988-ի փետրվարին: 2է՞ որ արցախյան շարժումը հաբեշները չեն սկսել, և այդ պայքարը չեն ղեկավարել Գարիբաղյան և ոչ էլ Բոլիվարը: Ուզում եմ ասել, որ այդ պայքարն սկսողները պետք է կարողանային տեսնել գոնե մոտիկ ապագան և հաշվարկներ կատարել ոչ այսօր: Թող ներվի ինձ, բայց պիտի ասեմ, որ և՛ իշխանությունները, և՛ ընդդիմությունը սխալ ճանապարհով են գնում: Արցախի, Հայաստանի փրկությունն ու հաջողությունը համազգային, համահայկական պայքարի մեջ է:

Մենք պարտավոր ենք հասկանալու հետևյալ հանրահայտ ճշմարտությունները և մեր գործողություններում ելնելու դրանցից: Ազգային-ազատագրական պատերազմը մղում է ամբողջ ազգը և ոչ թե նրա մի մասը: Վճռորոշ գործոն է ազգային բանակն իր բոլոր ատրիբուտներով: Պատերազմող ազգն ունենում է համապատասխան հուզական հոգեբանություն, որին կոչված է նպաստելու համապատասխան քարոզչությունը (թերթեր, ռադիոհեռուստատեսություն և այլն): Կարևորագույն դեր ունի ներքին և արտաքին քաղաքականությունը: Թե ինչ վիճակում է այս բնագավառներից յուրաքանչյուրը, բոլորիս է հայտնի: Ուրեմն ամբողջ ազգը պետք է ոտքի կանգնի, միավորի իր մտավոր, ֆիզիկական ու հոգևոր ուժերը՝ այս արհավիրքի առաջն առնելու, կորցրածը թշնամուց ետ խլելու համար: Հաղթանակը ժողովուրդն է կռելու:



Համլետ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական  
գիտությունների  
թեկնածու,  
դոցենտ,  
«Արցախ»  
հայրենակցական  
միության  
նախագահության  
անդամ

Արցախյան գոյամարտի ելքից է կախված մեր ազգային ապագան, քաղաքակիրթ ժողովուրդ կոչվելու իրավունքը: Այնպես չանենք, որ սերունդներն անիծեն 1988-ի փետրվարը և սարսափով փառք տան նախկին ԽՍՀՄ-ի կազմում ապրած 70-ամյա ստրկությանը: Հարկավոր է սթափվել, վերջ տալ անձնական և կուսակցական-քաղաքական հիվանդագին պատվախնդրություններին: Պահը ճակատագրական է, իրավունք չունենք սխալվելու: Քաղաքական պայքարի ներկա մեթոդները մերժելի են, արցախյան խաղաքարտը իշխանությունների և ընդդիմության կողմից շահարկելն՝ անընդունելի: Վճռականորեն ետ վանենք խուճապային տրամադրությունների ամենափոքրիկ դրսևորումներն անգամ: Եթե մեր ժողովուրդը ոտքի կանգնեց ամբողջ հասակով, թըշնամին չի դիմանա: Այժմ կարևորն այն է, որ Արցախը չդարձնենք քաղաքական պայքարի թատերաբեմ, դա կործանարար է, պարոնայք: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պետք է դառնա սպակուսակցական պայքարի գոտի, որպեսզի հայ ազգը գոնե առայժմ Արցախում ցուցաբերի ազգային միասնություն: Որպեսզի ստեղծվի միասնական նպատակներ հետապնդող և համազգային խնդիրների լուծմանը նպաստող բանակ և ոչ թե քաղաքական խմբակցություններից կազմված գինյալների խմբավորումներ, որոնք հաճախ առաջին պլան են մղում կուսակցական շահերը: Դա վերաբերում է բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպություններին, այդ թվում նաև «Արցախ» հայրենակցական միությանը, որը ներկայացնելու պատիվն ունեն: Դա վերաբերում է յուրաքանչյուր հայի ու նախ և առաջ բոլոր արցախցիներին: Համազգային շահը վեր է ամեն ինչից: